բինաց կանոնաց սուրբ առաքելոց և հայրապետաց և յետի տաճկի յօրինօք առեալ կինն արձակէր, զզջացեալ ապաշխարէր, կրկին օրհնէաք և ընդունէաք, զոր բազում՝ շնութեամբ առեալ զկանայսքն արձակել տվաք։ Եւ ըստ աւուրց տօնախմբութեանն պատշաճի և խորհրդոյ քարոզէաք միշտ ապաշխարել։ այսպէս ժամակարգութեամբ կառավարէաք Ըստամբօլու։ Սահապայեար Երեմիայն և Թիւթէլօղլիք Ովաննէս և Յարութիւն և Էսքէր օղլի Նիկողոսն, այս Դ մարդիք թէմէսիւկ են գրեր, և իւրեանց կնքովն կընքեալ ուղարկեցին Վէզիրին թէ այսչափ դրամ տանք թուրքին մեծաւորին, թող զԱւետիք վարդապետն հանէ ի պատրիարգութենէ և մեզ շնորհեսցէ ըզմանսուպ պատրիարքութեան։ Վէզիրն այլ զայն թէմէսիւկն նոցա կնքով և զարգուհալն հետ ցոյց կուտայ Սուլթան Մուստաֆային և Շէյխիսլամին, և նոյն ժամայն կուբարկանա Սուլթան Մուսթաֆան, Հէթտի Շէրիֆ կառաքէ Ըստամբօլու Ղայմախամին թէ այդ մարդիկն մինչ ի մահ չէքթիւրին զընեա։ Եւ դեռ ոչ էի լըվեալ զորպիսութիւն իրին, Կոստանդնուպօլսոյ գիր եկաւ աղաչանաց մեզ թէ զայս մարդիկս խնդրեա ի Վէզիրէն, ազատեսցէ ի բանտէն, և ես միամիտ գնացեալ ազատեցի Վէզիրին միամտութեամբ. բարկացաւ ինձ թէ Նոցա թշնամին մեր մեծն է. դու մի՛ խառնվիր դոցա բանին. և ես դարձեալ գնացի ի յօրևան իմ։

(Շարունակելի)

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՈՒՈՑ ՀԱՑՈՑ ԳՏԱՆԵԼՈՑ ՑԱՒՍՏՐԻԱ

ԸՍՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ 1869 ԱՄԻ.

Գաւառք	Հայք	Պապական Հայք	Գումար
Սաորին Աւստրիա	92	94	186
Բարձր Աւստրիա	1	1	2
Սալցպուրկ	—	—	—
Սթիրիա	7	4	11
Գարինթիա	—	—	—
Գարնիոլա	4	—	4
Ծովեզերեայ	130	43	173
Տիրոլիա	1	—	1
Բոհեմիա	8	2	10
Մորավիա	11	18	29
Սիլէզիա	—	—	—
Կալիցիա	126	2102	2228
Պուքովինա	828	882	1710
Դալմացիա	—	—	—
Հունգարիա	308	853	1161
Տրանսիլվանիա	224	4120	4344
Խրվաթիա և Սքլավոնիա	—	—	—
	73	131	204
	1813	8250	10063
Զինուորականութեան մէջ	41	29	70
	1854	8279	10133

ԿԱՐԵՒՈՐ.

Ամբարատայ անցեալ Փետրուարի թըւոյն 49րդ երեսի առաջին էջի (սիւնակի) Կրօնական յօդուածոյ ի վերջին պարբերութեան՝ փոխանակ չորրորդի՝ սխալմամբ յիշուած է երրորդ դար։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.